ԱՍՊԱՐԷԶ 75 ԱՄԵԱԿ

1908 - 1983

ՅՈՒԼԻՍ 1983
ԼՈՍ ԱՆՃԵԼԷՍ

«ԱՍՊԱՐԷԶ»Ը ԵՒ ՀԱՅ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ

ՌՈՒԲԻՆԱ ՓԻՐՈՒՄԵԱՆ

«Ասպարէզ» եւ 75 տարիների գործունէութիւն:

Նայում ենք այդ 75 տարիների ճոխ եւ հարուստ անցեալին եւ մեր դէմ պատկերւում են հեռու եւ մօտիկ նուաճումներ, մաքառումներ, ճիգ՝ արդարացնելու պարզ գոյութիւնը թերթի, ձգտում՝ լաւագոյնս ի կատար ածելու իր առաքելութիւնը:

Նայում ենք այդ 75 տարիների անցեալին եւ մեր դէմ պատկերացւում է «Ասպարէզ»ը՝ հայ մամուլին յատուկ իր բնոյթով ու իր դերով:

«Ասպարէզ»! մէկ անդամ հայ մամուլի համեստ բայց որակաւոր ընտանիքի:

Շուրջ 190 տարուայ պատմութիւն ունի հայ պարբերական մամուլը. նրա սկզբնաւորումը անմիջականօրէն կապուած է հայ ժողովրդի մշակութային եւ ընկերային զարթօնքի հետ, եւ իրապէս էլ, հայ պարբերաթերթերի հրատարակութիւնը առաջին չօշափելի դրսեւորումն է եղել աշխարհի տարբեր երկրամասերում հաստատուած հայ գաղութների մասսայի մտաւոր զարգացման: Այդ պարբերականները ամենահարազատ կերպով արտացոլել են տուեալ գաղութի կեանքը, առօրեան, նրա գրական, գեղարուեստական նուաճումներն ու գաղափարական ոգորումները:

Հայ մամուլը դարձել է հայ մշակոյթի եւ հասարակական մտքի զարգացման ամենակարեւոր գործօնը: Նա իր սկզբնաւորումը ապրել է հեռաւոր Հնդկաստանում եւ Իտալիայում, յետոյ իր կենտրոնացումն է գտել 19րդ դարի հայ ժողովրդի մտաւոր կեանքի զարկերակ՝ Պոլսում եւ Թիֆլիսում: Հայ պարբերական մամուլը իր զարգացման օրինաչափութիւններով սերտօրէն կապուած է եղել հայ ժողովրդի հասարակական, ընկերային, տնտեսական, գրական եւ քաղաքական զարգացման փուլերի հետ: Նրա էջերը իւրօրինակ թատերաբեմ են դարձել մշակութային ու քաղաքական տարբեր հոսանքների բախման եւ զարգացման:

Հայ պարբերական մամուլը, իր ծագումից, 1794ից, մինչեւ 20րդ դարի սկիզբը, այսինքն իր պատմութեան առաջին հարիւրամեակի ընթացքում ունեցել է 377 անուն հրատարակութիւն: Այս թիւը արագ թափով աճել է 20րդ դարի առաջին երկու տասնամեակներում, հասնելով 974ի:(1) Սրանք ի հարկէ բոլորն էլ յաջողակ հրատարակութիւններ չեն եղել, շատերը դադարել են երբեմն հենց առաջին թուից յետոյ. սակայն պատմութիւնը ցոյց է տալիս, որ ժողովուրդը ընդառաջել է մամուլին, հաղորդակից է եղել նրա հետ, նրան է տուել իր մտային զարգացման արդիւնքները եւ նրանից ստացել աշխարհի գիտական, հասարակական եւ փիլիսոփայական նոր ուսմունքներ:

«Ստեղծուել է հասարակական կեանք, իր հրատապ հարցերով եւ իր հետզհետէ արագացող բախումով, տեմպով, ստեղծուել է ընթերցողների հոծ բազմութիւն կանոնաւոր, սիստեմատիկական ընթերցանութեան պահանջով: Ծանրաշարժ, ուշ-ուշ եւ անկանոն լոյս տեսնող գիրքը միչ է համապատասխանում այդ փոխուած պայմաններին: Պարբերաբար հրատարակուող ամսագիրը եւ օրագիրը իրանք հենց այդ պայմանների ծնունդն են եւ ամէնից լաւ են բաւարարութիւն տալիս նոր պահանջներին»:(2)

Մշակութային եւ կրթական այլ հիմնարկների չգոյութեան պատճառով, հայ մամուլը, իր սկզբնաւորումից սկսած, ստանձնեց հայ կեանքի մտաւոր գործունէութիւնը, իր մէջ պարփակելով գրականութիւն, հրապարակախօսութիւն, քաղաքա-փիլիսոփայութիւն: Հայ գրողը առանձին գործ հրատարակելու նիւթական միջոցը չունենալով եւ կամ օսմանեան ու ցարական խստագոյն գրաքննութիւնից խուսափելով, իր գեղարուեստական ստեղծագործութիւնները մամուլին է վստահել, եւ որքան են այն գողտրիկ կտորները, որ մինչեւ այսօր էլ թաղուած են մնացել օրաթերթերի էջերի մէջ:

Գաղափարական զանազան հոսանքների կազմաւորման շրջանին, երբ դեռ որոշակի քաղաքական կուսակցութիւններ չէին կազմուել, մամուլը թատերաբեմը դարձաւ կրօնական, ազգային, պահպանողական, ժողովրդային, ընկերվարական այդ հոսանքների: Ամէն դէպքում էլ շարժում էր առաջադրւում եւ աշխատանք:

«Երէկ մենք կտակարանական ազգ էինք
Այսօր մենք ազգասէրներ ենք
Էգուց մենք պէտք է աշխատողներ դառնանք:(3)

Մամուլի մէջ լոյս տեսած հրապարակախօսութիւնները դառնում են հասարակական գաղափարախօսութեանց ամենաչօշափելի եւ գործնական ձեւը՝ մերթ յախուռն, մերթ պահպանողական զգուշութեամբ առաջադրելով բարեփոխումներ ազգային կեանքի բոլոր բնագաւառներում:

Քաղաքական կուսակցութիւնների կազմաւորումը նոր էջ բացեց հայ մամուլի պատմութեան մէջ, նրան վստահելով նաեւ կուսակցութեան

խօսքն ասելու, նրա գաղափարաբանութիւնը տարածելու լուրջ ու դժուարին պարտականութիւնը:

«Հնչակ», «Արմենիա», «Դրօշակ»:

Արդէն գործն էր խօսում: Հայ հասարակական մտքի զարգացման նոր հանգրուանն էր իր արտացոլքը գտնում կուսակցական մամուլի էջերի մէջ:

Ոգեւորութիւնը լաւատեսութիւն էր ներշնչում: 20րդ դարը բացւում էր որպէս յոյսի եւ իտէալների դար, վերածնուած եւ գործի մէջ նետուած հայ ժողովրդի համար:

«...Կարելի է հաւատալ, որ կամաց-կամաց կ'ոչնչանան մարդկանց բաժանող նախապաշարմունքներն ու մոլութիւնները, եւ համամարդկային բարօրութեան գաղափարը ժողովուրդների հասկացողութիւնների մէջ ժամանակի ընթացքում աւելի ընդարձակ գրաւումներ կ'անէ»:(4)

Կամ՝

«20րդ դարում ծագելու է ազատութեան երջանկութեան արշալոյսը, երբ, գուցէ 'գայլք եւ գառինք ի մի ճարակեսցին'»:(5)

Եւ դեռ աւելի գործնական, աւելի մեծ հաւատով ու վճռականութեամբ՝

«...Մեր դրօշակը միշտ բարձր կը պահենք, կը յաղթենք եւ փառաւոր ապագայի կ'արժանանանք, կամ թէ դիւցազնական մահով կ'աներեւութանանք պատմութեան բեմից:

«Ցառա՛ջ, բաղաքակրթութիւնը միշտ զոհ է պահանջել մարդկութիւնից. փառք է մեզ, եթէ նրա արժանաւոր զոհը լինենք»:(6)

Կենդանի գործ կար, քաղաքական շարժում, զէնքի ուժով ոտնատակ դարձած իրաւունքները յետ ստանալու անխախտ որոշում, եւ դաշնակցական մամուլը հենց այդ էր արտացոլում: «Դրօշակ»ի թիւերը լեցուն էին հերոսական դրուագներով, իսկ արտասահմանի կուսակցական մամուլը երկրի մէջ տարուող «Գործ»ն էր արձագանգում:

Այսօր, իր երկրից ու իր հողից արմատախիլ եղած ու սփիւռք նետուած Հ. Յ. Դաշնակցութիւնը, իր քաղաքական ոգորումների կողքին, իր ուսերին է առել նաեւ գաղութների կազմակերպման ու նրանց ղեկավարման գործը եւ իր նպատակի իրագործման որպէս կարեւոր նախապայման, հիմնած ունի իր օրգանը ամէն գաղութի մէջ:

Դաշնակցական մամուլը այսօր, իր կուսակցական գաղափարախօսութիւնը տարածելուց բացի, իր լաւագոյնն է ի գործ դնում քաղաքական համաշխարհային հարցերը հայ ազգային-քաղաքական շահերի տեսանկիւնից վերլուծելու, հայ մարդուն ամէնօրեայ շփման մէջ դնելու հայ կեանքի հետ, եւ լուրջ ու իրապաշտ մօտեցումով ծրագրելու եւ ղեկավարելու հայապահպանման կարեւոր գործը:

(Շար. էջ 25)



Սփիւռքի զանազան համայնքներր առանձին, կղզիացած հատուածներ չեն, այլ ներգրաւուած են իրենց հիւրընկալող երկրների քաղաքական-տնտեսական իւրայատուկ դրուածքի մէջ: Երկրին տիրող քաղաքական, տնտեսական եւ ընկերային գաղափարաբանութիւնը, խորթ կամ հարազատ մեր կուսակցութեան հաւատամքներին, իր դրսեւորումն է գտնում դաշնակցական մամուլի մէջ, արտացոլելով դրանց առաջադրած հակասութիւններն ու ներդաշնակութիւնները, ինչպէս նաեւ կուսակցութեան ուղեգիծը տուեալ հարցի նկատմամբ:

Ահա իւրայատուկ բնոյթն ու բովանդակութիւնը հայ մամուլի եւ մանաւանդ դաշնակցական մամուլի:

Ահա իւրայատուկ բնոյթը, բովանդակութիւնն ու դերը «Ասպարէզ»ի՝ որպէս մէկ անդամը հայ մամուլի եւ մանաւանդ դաշնակցական մամուլի որակաւոր ընտանիքի:

Գործունէութեան ամեակները միայն փառատօներով չեն նշւում, այլ նաեւ ինքնաքննադատութեամբ եւ հաշուետուութեամբ: Արդեօ՞ք «Ասպարէզ»ը որքանով է արդարացրել իրեն վստահուած դերն ու պարտականութիւնը. ինչպիսի՞ տեղ է գրաւում նա հայ երիտասարդութեան առօրեայ կեանքում: «Ասպարէզ»ին մօտիկ կանգնած ամէն մի անհատ կարող է անվերապահօրէն վկայել այն հսկայ զոհաբերութեանց եւ ջանքերին, որ տարւում է թերթը իր պատշաճ բարձրութեան վրայ պահելու եւ նրա մէջ, թէ՛ անգլերէն եւ թէ՛ հայերէն լեզուներով, արժէքաւոր ուսումնասիրութիւններ, վերլուծութիւններ եւ առաջնորդող յօդուածներ տեղադրելու: Սակայն իրատեսութեամբ խոստովանենք, որ «Ասպարէզ»ը պէտք եղած ժողովրդականացումը չունի համայնքի մէջ, վկայ նրա տպաքանակը ի համեմատութիւն գաղութի հայութեան թիւին: Պատճառը՝ ընդհանուր սառնութիւն եւ անտարբերութիւն սփիւռքահայութեան, մանաւանդ նոր սերնդի մէջ դէպի այն ամէն ինչ որ հայկական է, այն ինչ որ զէնք է ծառայում հայապահպանման: Սա ընդհանուր ցաւ է սփիւռքի ամբողջ տարածքի մէջ, ընդհանուր վտանգ, որ առաջին համաշխարհային պատերազմից յետոյ, այսինքն սփիւռքի կազմաւորումի օրերից սկսած, կախուած է սփիւռքահայութեան գլխին դառը. մի թոյն է, որ օտար մշակոյթների հրապոյրով ցողուած, կաթիլ առ կաթիլ ծորում է սփիւռքում հասակ նետող հայ երիտասարդի երակների մէջ: Պիտի յուսահատուե՞լ: Ոչ երբեք: Մեր ժողովրդի 3000ամեայ պատմութեան ընթացքում այսպիսի վտանգներ շատ են եկել ու անցել, մեր ժողովուրդը տոկացել է ու առաջ ընթացել, պէտք է առաջ ընթանայ «Ասպարէզ»ը, որպէս հարազատ արտայայտիչը հայ կեանքի, պէտք է մաքառէ. իր շուրջ բոլորուած գիտակից ու կարող մտաւորականներով պէտք է աւելի ու աւելի բարձրանայ դաշնակցական օրգանին վայել բարձունքներն ի վեր, պէտք է լաւագոյնս կատարէ իր վրայ դրուած ծանր պարտականութիւնները, մինչեւ որ...

---

(1) Ա. Կիրակոսեան, «Հայ պարբերական մամուլի մատենագրութիւն», Երեւան, 1970. էջ 479-497:

(2) «Մուրճ», 1901, թիւ 1:

(3) «Մշակ», 1872, թիւ 1:

(4) «Մուրճ», 1901, No. 1:

(5) «Մշակ», 1901, No. 6:

(6) «Դրօշակ», 1896, թիւ 15: